| Սիրիա                              | 0                                                 | 0.0%      | 0                      | 0.0%      | 0                     | 0                                                    | 0.0%      | 1                      | 0.0%      | 0                     |
| Եվրոպական պետություններ            | 23                                                | -43.5%    | 13                     | 44.4%     | 9                     | 14                                                   | -7.1%     | 13                     | 8.3%      | 12                    |
| ԱՊՀ պետություններ, բացառությամբ ՌԴ | 8                                                 | 12.5%     | 9                      | 12.5%     | 8                     | 18                                                   | -50.0%    | 9                      | -18.2%    | 11                    |
| Այլ պետություններ                  | 7                                                 | 14.3%     | 8                      | 2.0 անգամ | 4                     | 6                                                    | 3.8 անգամ | 23                     | 4.6 անգամ | 5                     |
| ԸՆԴԱՄԵՆԸ                           | 164                                               | 15.9%     | 190                    | 6.1%      | 179                   | 358                                                  | -15.6%    | 302                    | 20.3%     | 251                   |


### 3.6 Բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների վերլուծություն

3.6.1 Հանրապետությունում 2022 թվականի դեկտեմբերին իրականացվել է բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի 1,391 գործարք: 2022 թվականի դեկտեմբերին հանրապետությունում գրանցված բնակարանների առուվաճառքի գործարքների քանակը 2022 թվականի նոյեմբերի համեմատ նվազել է 4.0 %-ով, 2021 թվականի դեկտեմբերի համեմատ՝ 19.5 %-ով:

Գծապատկեր 3.6-1-ում ներկայացված է 2022 թվականի դեկտեմբերին հանրապետությունում իրականացված բնակարանների առուվաճառքի գործարքների տոկոսային բաշխվածությունը ըստ Երևան քաղաքի և մարզերի.



**Հանրապետությունում բազմաբնակարան բնակելի շենքերի  
բնակարանների առուվաճառքի գործարքների տոկոսային  
բաշխվածությունը**



Աղյուսակ 3.6-1-ում ներկայացված է 2022 թվականի դեկտեմբերին հանրապետությունում իրականացված բնակարանների առուվաճառքի գործարքների քանակական համեմատությունը 2021 թվականի դեկտեմբեր և 2022 թվականի նոյեմբեր ամիսների նկատմամբ.

Աղյուսակ 3.6-1


|                        | 2021<br>թվականի<br>դեկտեմբեր | փոփոխումը     | 2022<br>թվականի<br>դեկտեմբեր | փոփոխումը    | 2022<br>թվականի<br>նոյեմբեր |
|------------------------|------------------------------|---------------|------------------------------|--------------|-----------------------------|
| Երևան                  | 1,106                        | -15.6%        | 933                          | -7.2%        | 1,005                       |
| Արագածոտն              | 15                           | -40.0%        | 9                            | -10.0%       | 10                          |
| Արարատ                 | 39                           | -30.8%        | 27                           | -25.0%       | 36                          |
| Արմավիր                | 62                           | -37.1%        | 39                           | -30.4%       | 56                          |
| Գեղարքունիք            | 32                           | -6.3%         | 30                           | 36.4%        | 22                          |
| Լոռի                   | 119                          | -32.8%        | 80                           | 14.3%        | 70                          |
| Կոտայք                 | 211                          | -34.1%        | 139                          | 20.9%        | 115                         |
| Շիրակ                  | 72                           | 5.6%          | 76                           | 4.1%         | 73                          |
| Սյունիք                | 32                           | 3.1%          | 33                           | 10.0%        | 30                          |
| Վայոց ձոր              | 7                            | -28.6%        | 5                            | -50.0%       | 10                          |
| Տավուշ                 | 32                           | -37.5%        | 20                           | -9.1%        | 22                          |
| <b>Հանրապետություն</b> | <b>1,727</b>                 | <b>-19.5%</b> | <b>1,391</b>                 | <b>-4.0%</b> | <b>1,449</b>                |

3.6.2 Երևան քաղաքում 2022 թվականի դեկտեմբերին իրականացվել է բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի 933 գործարք, 2022 թվականի դեկտեմբերին Երևան քաղաքում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակը 2022 թվականի նոյեմբերի համեմատ նվազել է 7.2 %-ով, իսկ 2021 թվականի դեկտեմբերի համեմատ՝ 15.6 %-ով:

Երևան քաղաքում 2022 թվականի դեկտեմբերին բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակի առավել բարձր տոկոսաչափ՝ 19.8-%, արձանագրվել է Կենտրոն, իսկ առավել ցածրը՝ 0.5 %՝ Նուբարաշեն վարչական շրջաններում:

Գծապատկեր 3.6-2-ում ներկայացված է 2022 թվականի դեկտեմբերին Երևան քաղաքում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակական բաշխվածությունը ըստ վարչական շրջանների:

Գծապատկեր 3.6-2



Աղյուսակ 3.6-2-ում ներկայացված են 2022 թվականի դեկտեմբերին Երևան քաղաքում վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների պայմանագրային գների և վաճառահանված բնակարանների առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների շուկայական միջինացված գները՝ 1 մ² մակերեսի հաշվարկով, ըստ վարչական շրջանների և տարածագնահատման գոտիների:

Աղյուսակ 3.6-2

| Վարչական շրջան   | 2021 թվականի դեկտեմբեր | փոփոխումը | 2022 թվականի դեկտեմբեր | փոփոխումը | 2022 թվականի նոյեմբեր |
|------------------|------------------------|-----------|------------------------|-----------|-----------------------|
| Կենտրոն միջին    | 680,600                | 14.6%     | 780,000                | 0.9%      | 773,100               |
| Կենտրոն (Գոտի 1) | 840,200                | 17.6%     | 988,100                | 0.8%      | 980,000               |
| Կենտրոն (Գոտի 2) | 700,000                | 17.9%     | 825,000                | 0.7%      | 819,400               |
| Կենտրոն (Գոտի 3) | 592,100                | 18.2%     | 700,100                | 0.6%      | 695,600               |
| Կենտրոն (Գոտի 4) | 532,050                | 7.7%      | 573,000                | 0.5%      | 570,100               |
| Կենտրոն (Գոտի 5) | 431,500                | 8.9%      | 470,100                | 0.0%      | 470,100               |
| Արաբկիր միջին    | 484,100                | 12.8%     | 546,100                | 0.7%      | 542,500               |
| Արաբկիր (Գոտի 3) | 525,000                | 9.4%      | 574,400                | 0.0%      | 574,400               |
| Արաբկիր (Գոտի 4) | 515,200                | 3.5%      | 533,100                | 1.4%      | 525,600               |
| Արաբկիր (Գոտի 5) | 450,000                | 17.4%     | 528,500                | 1.0%      | 523,100               |

|                           |         |       |         |       |         |
|---------------------------|---------|-------|---------|-------|---------|
| Արաբկիր (Գոտի 7)          | 360,000 | 18.4% | 426,400 | 0.0%  | 426,400 |
| Քանաքեռ-Զեյթուն միջին     | 356,100 | 10.1% | 392,200 | 0.0%  | 392,200 |
| Քանաքեռ-Զեյթուն (Գոտի 4)  | 405,400 | 5.8%  | 428,900 | 0.1%  | 428,600 |
| Քանաքեռ-Զեյթուն (Գոտի 5)  | 370,100 | 7.1%  | 396,500 | 0.2%  | 395,900 |
| Քանաքեռ-Զեյթուն (Գոտի 6)  | 350,800 | 8.7%  | 381,200 | 0.0%  | 381,200 |
| Քանաքեռ-Զեյթուն (Գոտի 7)  | 300,600 | 10.1% | 331,000 | 0.2%  | 330,300 |
| Նոր-Նորք միջին            | 310,000 | 7.1%  | 332,100 | 0.3%  | 331,050 |
| Նոր-Նորք (Գոտի 5)         | 362,900 | 2.8%  | 373,000 | 0.1%  | 372,700 |
| Նոր-Նորք (Գոտի 6)         | 325,700 | 4.4%  | 340,100 | 1.2%  | 336,100 |
| Նոր-Նորք (Գոտի 7)         | 300,400 | 0.5%  | 302,000 | 0.0%  | 302,000 |
| Նոր-Նորք (Գոտի 8)         | 273,700 | 5.4%  | 288,500 | 0.5%  | 287,200 |
| Էրեբունի միջին            | 310,000 | 10.7% | 343,200 | -0.4% | 344,500 |
| Էրեբունի (Գոտի 5)         | 370,100 | 4.7%  | 387,500 | -0.8% | 390,700 |
| Էրեբունի (Գոտի 6)         | 330,500 | 8.3%  | 358,000 | -0.6% | 360,000 |
| Էրեբունի (Գոտի 7)         | 325,000 | 8.0%  | 351,000 | -0.6% | 353,000 |
| Էրեբունի (Գոտի 8)         | 286,100 | 8.4%  | 310,000 | 1.3%  | 306,100 |
| Էրեբունի (Գոտի 9)         | 236,000 | 16.1% | 274,000 | 0.3%  | 273,200 |
| Շենգավիթ միջին            | 318,050 | 8.5%  | 345,100 | 0.0%  | 345,100 |
| Շենգավիթ (Գոտի 5)         | 364,300 | 3.4%  | 376,700 | 0.4%  | 375,100 |
| Շենգավիթ (Գոտի 6)         | 332,200 | 8.4%  | 360,100 | 0.0%  | 360,100 |
| Շենգավիթ (Գոտի 7)         | 314,000 | 7.2%  | 336,500 | 0.5%  | 334,800 |
| Շենգավիթ (Գոտի 8)         | 310,000 | 2.8%  | 318,800 | -0.2% | 319,400 |
| Շենգավիթ (Գոտի 9)         | 270,000 | 3.3%  | 279,000 | -0.5% | 280,500 |
| Դավթաշեն միջին            | 351,300 | 15.1% | 404,500 | 1.1%  | 400,100 |
| Դավթաշեն (Գոտի 5)         | 345,800 | 19.1% | 412,000 | 0.9%  | 408,200 |
| Դավթաշեն (Գոտի 7)         | 365,500 | 8.8%  | 397,600 | 1.9%  | 390,000 |
| Աջափնյակ միջին            | 331,500 | 9.2%  | 362,000 | 0.0%  | 362,000 |
| Աջափնյակ (Գոտի 5)         | 355,000 | 7.6%  | 382,100 | 0.7%  | 379,300 |
| Աջափնյակ (Գոտի 6)         | 359,000 | 2.7%  | 368,700 | -0.4% | 370,100 |
| Աջափնյակ (Գոտի 7)         | 330,400 | 1.5%  | 335,500 | 0.0%  | 335,500 |
| Աջափնյակ (Գոտի 8)         | 280,000 | 0.0%  | 280,000 | 0.0%  | 280,000 |
| Մալաթիա-Սերաստիա միջին    | 313,100 | 10.5% | 346,100 | 0.6%  | 344,000 |
| Մալաթիա-Սերաստիա (Գոտի 5) | N/A     | N/A   | 520,100 | 0.0%  | 520,100 |
| Մալաթիա-Սերաստիա (Գոտի 6) | 325,200 | 5.5%  | 343,000 | 0.6%  | 341,100 |
| Մալաթիա-Սերաստիա (Գոտի 7) | 324,400 | 16.5% | 378,050 | 0.7%  | 375,600 |
| Մալաթիա-Սերաստիա (Գոտի 9) | 288,500 | 5.8%  | 305,100 | 0.7%  | 303,000 |
| Ավան միջին                | 315,050 | 9.3%  | 344,500 | 0.4%  | 343,100 |
| Ավան (Գոտի 5)             | 335,200 | 13.4% | 380,000 | 0.0%  | 380,000 |
| Ավան (Գոտի 6)             | 330,000 | 11.5% | 368,100 | 0.8%  | 365,000 |
| Ավան (Գոտի 7)             | 310,200 | 5.4%  | 327,100 | -0.3% | 328,050 |
| Ավան (Գոտի 8)             | 228,100 | 20.6% | 275,000 | 0.7%  | 273,200 |
| Նուբարաշեն միջին          | 190,050 | 7.9%  | 205,000 | 0.2%  | 204,500 |
| Նուբարաշեն (Գոտի 10)      | 202,000 | 7.4%  | 217,000 | 0.4%  | 216,050 |
| Նուբարաշեն (Գոտի 11)      | 184,000 | 9.2%  | 201,000 | 0.0%  | 201,100 |

Գնային փոփոխությունների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2022 թվականի դեկտեմբերին Երևան քաղաքում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1 մ² մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները 2022 թվականի նոյեմբերի համեմատ՝ աճել են 0.4%-ով, իսկ 2021 թվականի դեկտեմբերի համեմատ աճել՝ 11.1%-ով:

#### Ծանոթություն

Բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների շուկայական միջին գները տրված են ըստ ՀՀ կառավարության 04.06.2020թ. N 1023-Ն որոշմամբ հաստատված տարածագնահատման գոտիների:


\*N/A-նշված գոտում միջին գնի հաշվարկման համար 1 տարվա ընթացքում բավարար քանակով գործարքներ չեն գրանցվել

3.6.3 2022 թվականի դեկտեմբերին մարզերում վաճառվել է բազմաբնակարան բնակելի շենքերի 458 բնակարան, ընդ որում՝ բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների 4.8 %-ը գրանցվել է գյուղական բնակավայրերում:

2022 թվականի դեկտեմբերին մարզերում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակը 2022 թվականի նոյեմբերի համեմատ աճել է 3.2 %-ով, իսկ 2021 թվականի դեկտեմբերի համեմատ՝ նվազել 26.2 %-ով:

Գծապատկեր 3.6-3-ում ներկայացված է 2022 թվականի դեկտեմբերին մարզերում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակական բաշխվածությունը.

Գծապատկեր 3.6-3



2022 թվականի դեկտեմբերին բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակի առավել բարձր տոկոսաչափ՝ 30.3 %, արձանագրվել է Կոտայքի, իսկ առավել ցածրը՝ 1.1 %՝ Վայոց ձորի մարզերում:

Աղյուսակ 3.6-3-ում ներկայացված են 2022 թվականի դեկտեմբերին մարզերի քաղաքներում վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների պայմանագրային գների և վաճառահանված բնակարանների առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների շուկայական միջինացված գները՝ 1մ<sup>2</sup> մակերեսի հաշվարկով.

Աղյուսակ 3.6-3

| Մարզը       | Քաղաքը      | 2021<br>թվականի<br>դեկտեմբեր | փոփոխում<br>Ը | 2022<br>թվականի<br>դեկտեմբեր | փոփոխում<br>Ը | 2022<br>թվականի<br>նոյեմբեր |
|-------------|-------------|------------------------------|---------------|------------------------------|---------------|-----------------------------|
| Արագածոտն   | Աշտարակ     | 155,500                      | 12.7%         | 175,200                      | 0.1%          | 175,000                     |
|             | Ապարան      | 89,000                       | 9.1%          | 97,100                       | 1.1%          | 96,000                      |
|             | Թալին       | 76,000                       | 2.6%          | 78,000                       | 0.5%          | 77,600                      |
| Արարատ      | Արտաշատ     | 149,000                      | 11.9%         | 166,800                      | -0.4%         | 167,500                     |
|             | Մասիս       | 148,200                      | 17.1%         | 173,500                      | 1.2%          | 171,500                     |
|             | Վեդի        | 123,500                      | 10.9%         | 137,000                      | 0.4%          | 136,500                     |
|             | Արարատ      | 111,000                      | 14.4%         | 127,000                      | 0.0%          | 127,000                     |
| Արմավիր     | Վաղարշապատ  | 185,000                      | 23.0%         | 227,600                      | 0.0%          | 227,600                     |
|             | Արմավիր     | 123,000                      | 18.0%         | 145,100                      | 1.5%          | 143,000                     |
|             | Մեծամոր     | 88,100                       | 27.7%         | 112,500                      | 1.4%          | 111,000                     |
| Գեղարքունիք | Սևան        | 95,000                       | 21.1%         | 115,000                      | 1.7%          | 113,050                     |
|             | Գավառ       | 60,100                       | 25.1%         | 75,200                       | 1.5%          | 74,100                      |
|             | Մարտունի    | 105,000                      | 7.7%          | 113,100                      | 1.0%          | 112,000                     |
|             | Վարդենիս    | 48,100                       | 19.5%         | 57,500                       | 0.0%          | 57,500                      |
|             | Ճամբարակ    | 37,000                       | 13.5%         | 42,000                       | 0.0%          | 42,000                      |
| Լոռի        | Վանաձոր     | 101,500                      | 21.3%         | 123,100                      | 0.9%          | 122,000                     |
|             | Ստեփանավան  | 60,000                       | 21.8%         | 73,100                       | 1.4%          | 72,100                      |
|             | Սպիտակ      | 108,200                      | 14.6%         | 124,000                      | 0.0%          | 124,000                     |
|             | Ալավերդի    | 48,500                       | 19.6%         | 58,000                       | 1.6%          | 57,100                      |
|             | Տաշիր       | 55,000                       | 11.3%         | 61,200                       | 0.0%          | 61,200                      |
|             | Թումանյան   | 21,500                       | 16.3%         | 25,000                       | 0.0%          | 25,000                      |
|             | Ախթալա      | 39,000                       | 14.1%         | 44,500                       | 0.0%          | 44,500                      |
| Կոտայք      | Աբովյան     | 226,200                      | 10.7%         | 250,500                      | 0.0%          | 250,500                     |
|             | Նոր Հաճն    | 147,300                      | 11.3%         | 164,000                      | 1.2%          | 162,100                     |
|             | Բյուրեղավան | 128,200                      | 21.3%         | 155,500                      | 1.6%          | 153,000                     |
|             | Եղվարդ      | 144,100                      | 19.4%         | 172,100                      | 1.2%          | 170,100                     |
|             | Հրազդան     | 83,000                       | 26.5%         | 105,000                      | 1.8%          | 103,100                     |
|             | Ծաղկաձոր    | 327,500                      | 20.3%         | 394,000                      | 0.0%          | 394,000                     |
|             | Չարենցավան  | 97,100                       | 23.7%         | 120,100                      | 0.9%          | 119,000                     |
| Շիրակ       | Գյումրի     | 124,050                      | 18.5%         | 147,000                      | 0.1%          | 146,800                     |
|             | Արթիկ       | 71,100                       | 18.3%         | 84,100                       | 1.3%          | 83,050                      |
|             | Մարալիկ     | 52,000                       | 21.3%         | 63,100                       | 0.0%          | 63,100                      |
| Սյունիք     | Գորիս       | 145,000                      | 11.4%         | 161,500                      | 0.9%          | 160,000                     |
|             | Կապան       | 120,000                      | 19.3%         | 143,100                      | 0.8%          | 142,000                     |
|             | Սիսիան      | 84,200                       | 18.2%         | 99,500                       | 1.5%          | 98,000                      |
|             | Մեղրի       | 105,050                      | 10.4%         | 116,000                      | 0.7%          | 115,200                     |
|             | Քաջարան     | 103,000                      | 10.8%         | 114,100                      | 1.0%          | 113,000                     |

|           |             |         |       |         |      |         |
|-----------|-------------|---------|-------|---------|------|---------|
| Վայոց ձոր | Վայք        | 88,000  | 17.3% | 103,200 | 1.1% | 102,100 |
|           | Եղեգնաձոր   | 120,100 | 11.2% | 133,500 | 0.0% | 133,500 |
|           | Ջերմուկ     | 103,100 | 13.5% | 117,000 | 0.0% | 117,000 |
| Տավուշ    | Դիլիջան     | 136,400 | 21.7% | 166,000 | 0.0% | 166,000 |
|           | Իջևան       | 131,500 | 15.6% | 152,000 | 1.3% | 150,000 |
|           | Բերդ        | 94,050  | 10.0% | 103,500 | 0.0% | 103,500 |
|           | Նոյեմբերյան | 78,500  | 14.1% | 89,600  | 1.8% | 88,000  |
|           | Այրում      | 55,000  | 10.9% | 61,000  | 0.0% | 61,000  |


Գնային փոփոխությունների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2022 թվականի դեկտեմբերին մարզերի քաղաքներում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1 մ<sup>2</sup> մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները 2022 թվականի նոյեմբերի համեմատ աճել են 0.7%-ով, իսկ 2021 թվականի դեկտեմբերի համեմատ՝ աճել է 16.2%-ով:

### 3.7 Հողերի առուվաճառքի գործարքների վերլուծություն

3.7.1 Հանրապետությունում 2022 թվականի դեկտեմբերին իրականացվել է հողերի առուվաճառքի 2,204 գործարք: 2022 թվականի դեկտեմբերին հանրապետությունում գրանցված հողերի առուվաճառքի գործարքների քանակը 2022 թվականի նոյեմբերի համեմատ աճել է 13.5 %-ով, 2021 թվականի դեկտեմբերի համեմատ՝ նվազել 11.0 %-ով:

Գծապատկեր 3.7-1-ում ներկայացված է 2022 թվականի դեկտեմբերին հանրապետությունում իրականացված հողերի առուվաճառքի գործարքների տոկոսային բաշխվածությունը ըստ Երևան քաղաքի և մարզերի.

Գծապատկեր 3.7-1



Աղյուսակ 3.7-1-ում ներկայացված է 2022 թվականի դեկտեմբերին հանրապետությունում իրականացված հողերի առուվաճառքի գործարքների քանակական համեմատությունը 2021 թվականի դեկտեմբեր և 2022 թվականի նոյեմբեր ամիսների նկատմամբ.


Աղյուսակ 3.7-1

|                        | 2021 թվականի<br>դեկտեմբեր | փոփոխումը     | 2022 թվականի<br>դեկտեմբեր | փոփոխումը    | 2022 թվականի<br>նոյեմբեր |
|------------------------|---------------------------|---------------|---------------------------|--------------|--------------------------|
| Երևան                  | 129                       | 0.8%          | 130                       | 44.4%        | 90                       |
| Արագածոտն              | 291                       | -18.2%        | 238                       | -28.7%       | 334                      |
| Արարատ                 | 421                       | -41.8%        | 245                       | -0.8%        | 247                      |
| Արմավիր                | 545                       | -28.1%        | 392                       | 32.4%        | 296                      |
| Գեղարքունիք            | 111                       | -48.6%        | 57                        | -32.9%       | 85                       |
| Լոռի                   | 102                       | 0.0%          | 102                       | 34.2%        | 76                       |
| Կոտայք                 | 585                       | 8.5%          | 635                       | 15.9%        | 548                      |
| Շիրակ                  | 82                        | 37.8%         | 113                       | 61.4%        | 70                       |
| Սյունիք                | 47                        | 66.0%         | 78                        | 2.6 անգամ    | 30                       |
| Վայոց ձոր              | 87                        | -5.7%         | 82                        | 1.2%         | 81                       |
| Տավուշ                 | 76                        | 73.7%         | 132                       | 57.1%        | 84                       |
| <b>Հանրապետություն</b> | <b>2,476</b>              | <b>-11.0%</b> | <b>2,204</b>              | <b>13.5%</b> | <b>1,941</b>             |

3.7.2 Երևան քաղաքում 2022 թվականի դեկտեմբերին իրականացվել է հողերի առուվաճառքի 130 գործարք: 2022 թվականի դեկտեմբերին Երևան քաղաքում հողերի առուվաճառքի գործարքների քանակը 2022 թվականի նոյեմբերի համեմատ աճել է 44.4 %-ով, իսկ 2021 թվականի դեկտեմբերի համեմատ՝ 0.8 %-ով:

Գծապատկեր 3.7-2-ում ներկայացված է 2022 թվականի դեկտեմբերին Երևան քաղաքում հողի առուվաճառքի գործարքների քանակական բաշխվածությունը ըստ վարչական շրջանների:

Գծապատկեր 3.7-2



2022 թվականի դեկտեմբերին Երևան քաղաքում հողերի առուվաճառքի գործարքների առավել բարձր տոկոսաչափ՝ 19.2 %, արձանագրվել է Մալաթիա-Մեքաստիա, իսկ առավել ցածրը՝ 0.8 %՝ Նուբարաշեն վարչական շրջաններում:

2022 թվականի դեկտեմբերին Երևան քաղաքում իրականացվել է հողերի առուվաճառքի 130 գործարք՝ 11.99 հա ընդհանուր մակերեսով, որոնք, ըստ նպատակային նշանակության, բաշխվել են հետևյալ կերպ.

- գյուղատնտեսական նշանակության հող՝ 17 միավոր (2.75 հա),
- բնակելի կառուցապատման (տնամերձ) հող՝ 67 միավոր (2.95 հա),
- հասարակական կառուցապատման հող՝ 40 միավոր (5.61 հա),
- արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հող՝ 6 միավոր (0.68 հա):

Երևան քաղաքում վաճառված հողերի քանակի 10.0 %-ը կամ 13 միավոր (0.13 հա) ընդհանուր մակերեսով հանդիսացել է պետական կամ համայնքային սեփականության հող, իսկ 90.0 %-ը կամ 117 միավոր (11.86 հա)՝ մասնավոր սեփականության հող:

Աղյուսակ 3.7-2-ում ներկայացված է 2022 թվականի դեկտեմբերին Երևան քաղաքում պետական կամ համայնքային, ինչպես նաև մասնավոր սեփականություն հանդիսացող հողերի առուվաճառքի գործարքների քանակների և մակերեսների բաշխվածությունն ըստ վարչական շրջանների և հողերի նպատակային նշանակության.

Աղյուսակ 3.7-2


| Վարչական շրջան   | Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողեր |              |                 |              |                       |              |                           |              | Մասնավոր սեփականություն հանդիսացող հողեր |              |                 |              |                       |              |                           |              |
|------------------|-------------------------------------------------------|--------------|-----------------|--------------|-----------------------|--------------|---------------------------|--------------|------------------------------------------|--------------|-----------------|--------------|-----------------------|--------------|---------------------------|--------------|
|                  | գյուղ. նշանակության                                   |              | արդյունաբերական |              | բնակավայրերի          |              |                           |              | գյուղ. նշանակության                      |              | արդյունաբերական |              | բնակավայրերի          |              |                           |              |
|                  |                                                       |              |                 |              | բնակելի կառուցապատման |              | հասարակական կառուցապատման |              |                                          |              |                 |              | բնակելի կառուցապատման |              | հասարակական կառուցապատման |              |
|                  | միավոր                                                | մակերես (հա) | միավոր          | մակերես (հա) | միավոր                | մակերես (հա) | միավոր                    | մակերես (հա) | միավոր                                   | մակերես (հա) | միավոր          | մակերես (հա) | միավոր                | մակերես (հա) | միավոր                    | մակերես (հա) |
| Դավթաշեն         | 0                                                     | 0.00         | 0               | 0.00         | 0                     | 0.00         | 0                         | 0.00         | 0                                        | 0.00         | 2               | 0.04         | 8                     | 0.30         | 6                         | 1.01         |
| Էրեբունի         | 0                                                     | 0.00         | 0               | 0.00         | 0                     | 0.00         | 0                         | 0.00         | 0                                        | 0.00         | 2               | 0.38         | 0                     | 0.00         | 0                         | 0.00         |
| Աջափնյակ         | 0                                                     | 0.00         | 0               | 0.00         | 1                     | 0.05         | 0                         | 0.00         | 0                                        | 0.00         | 1               | 0.06         | 4                     | 0.20         | 9                         | 1.63         |
| Ավան             | 0                                                     | 0.00         | 0               | 0.00         | 0                     | 0.00         | 0                         | 0.00         | 0                                        | 0.00         | 0               | 0.00         | 3                     | 0.12         | 3                         | 0.15         |
| Արաբկիր          | 0                                                     | 0.00         | 0               | 0.00         | 1                     | 0.01         | 1                         | 0.01         | 0                                        | 0.00         | 0               | 0.00         | 7                     | 0.34         | 4                         | 0.60         |
| Կենտրոն          | 0                                                     | 0.00         | 0               | 0.00         | 9                     | 0.04         | 0                         | 0.00         | 0                                        | 0.00         | 0               | 0.00         | 10                    | 0.49         | 3                         | 0.004        |
| Մալաթիա-Սեբաստիա | 0                                                     | 0.00         | 0               | 0.00         | 1                     | 0.02         | 0                         | 0.00         | 14                                       | 1.13         | 0               | 0.00         | 7                     | 0.21         | 3                         | 0.54         |
| Քանաքեռ-Զեյթուն  | 0                                                     | 0.00         | 0               | 0.00         | 0                     | 0.00         | 0                         | 0.00         | 0                                        | 0.00         | 0               | 0.00         | 1                     | 0.09         | 1                         | 0.01         |
| Շենգավիթ         | 0                                                     | 0.00         | 0               | 0.00         | 0                     | 0.00         | 0                         | 0.00         | 3                                        | 1.62         | 0               | 0.00         | 5                     | 0.19         | 2                         | 0.17         |
| Նոր Նորք         | 0                                                     | 0.00         | 0               | 0.00         | 0                     | 0.00         | 0                         | 0.00         | 0                                        | 0.00         | 1               | 0.20         | 6                     | 0.53         | 4                         | 0.56         |
| Նորք-Մարաշ       | 0                                                     | 0.00         | 0               | 0.00         | 0                     | 0.00         | 0                         | 0.00         | 0                                        | 0.00         | 0               | 0.00         | 3                     | 0.32         | 4                         | 0.93         |
| Նուբարաշեն       | 0                                                     | 0.00         | 0               | 0.00         | 0                     | 0.00         | 0                         | 0.00         | 0                                        | 0.00         | 0               | 0.00         | 1                     | 0.04         | 0                         | 0.00         |
| Ընդամենը         | 0                                                     | 0.00         | 0               | 0.00         | 12                    | 0.12         | 1                         | 0.01         | 17                                       | 2.75         | 6               | 0.68         | 55                    | 2.83         | 39                        | 5.60         |

2022 թվականի դեկտեմբերին Երևան քաղաքում հողերի աճուրդային վաճառքի գործարք չի գրանցվել:

3.7.3 Մարզերում 2022 թվականի դեկտեմբերին իրականացվել է հողերի առուվաճառքի 2,074 գործարք, ընդ որում՝ նշված առուվաճառքի գործարքների 81.8 %-ը գրանցվել է գյուղական բնակավայրերում: 2022 թվականի դեկտեմբերին մարզերում հողերի առուվաճառքի գործարքների քանակը 2022 թվականի նոյեմբերի համեմատ աճել է 12.0 %-ով, իսկ 2021 թվականի դեկտեմբերի համեմատ՝ նվազել 11.6 %-ով:

Գծապատկեր 3.7-3-ում ներկայացված է 2022 թվականի դեկտեմբերին մարզերում իրականացված հողերի առուվաճառքի գործարքների քանակական բաշխվածությունը.





Մարզերում 2022 թվականի դեկտեմբերին հողերի առուվաճառքի գործարքների առավել բարձր տոկոսաչափ՝ 30.6 %, գրանցվել է Կոտայքի, իսկ առավել ցածրը՝ 2.7 % Գեղարքունիքի մարզերում:

2022 թվականի դեկտեմբերին մարզերում իրականացվել է հողերի առուվաճառքի 2,074 գործարք՝ 1297.06 հա ընդհանուր մակերեսով, որոնք, ըստ նպատակային նշանակության, բաշխվել են հետևյալ կերպ.

- գյուղատնտեսական նշանակության հող՝ 1,246 միավոր (1216.78 հա),
- բնակելի կառուցապատման (տնամերձ) հող՝ 682 միավոր (61.27 հա),
- հասարակական կառուցապատման հող՝ 108 միավոր (9.86 հա),
- արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հող՝ 24 միավոր (3.52 հա),
- առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքի հող՝ 10 միավոր (1.17 հա),
- հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հող՝ 2 միավոր (1.89 հա),
- ջրային հող՝ 2 միավոր (2.57 հա):

Հողերի առուվաճառքի առավել մեծ ծավալներն արձանագրվել են Արմավիրի մարզում՝ 476.86 հա, որից 462.86 հա՝ գյուղատնտեսական նշանակության:

2022 թվականի դեկտեմբերին մարզերում վաճառված հողերի քանակի 17.4 %-ը կամ 361 միավորը (171.88 հա) հանդիսացել է պետական կամ համայնքային սեփականության հող, իսկ 82.6 %-ը կամ 1,713 միավորը (1125.18 հա)՝ մասնավոր սեփականության հող: 2022 թվականի դեկտեմբերին մարզերում գրանցվել է վարձակալության իրավունքի վաճառքի 17 գործարք (5.12 հա), այդ թվում կառուցապատման իրավունքի վաճառքի:

Աղյուսակ 3.7-4-ում ներկայացված է 2022 թվականի դեկտեմբերին պետական կամ համայնքային, ինչպես նաև մասնավոր սեփականություն հանդիսացող հողերի առուվաճառքի գործարքների քանակների և մակերեսների բաշխվածությունն ըստ

մարզերի՝ բացառությամբ առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների, հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների և ջրային հողերի.

Աղյուսակ 3.7-4

| Վարչական շրջան | Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողեր |              |                 |              |                       |              |                           |              | Մասնավոր սեփականություն հանդիսացող հողեր |              |                 |              |                       |              |                           |              |
|----------------|-------------------------------------------------------|--------------|-----------------|--------------|-----------------------|--------------|---------------------------|--------------|------------------------------------------|--------------|-----------------|--------------|-----------------------|--------------|---------------------------|--------------|
|                | գյուղ. նշանակության                                   |              | արդյունաբերական |              | բնակավայրերի          |              |                           |              | գյուղ. նշանակության                      |              | արդյունաբերական |              | բնակավայրերի          |              |                           |              |
|                |                                                       |              |                 |              | բնակելի կառուցապատման |              | հասարակական կառուցապատման |              |                                          |              |                 |              | բնակելի կառուցապատման |              | հասարակական կառուցապատման |              |
|                | միավոր                                                | մակերես (հա) | միավոր          | մակերես (հա) | միավոր                | մակերես (հա) | միավոր                    | մակերես (հա) | միավոր                                   | մակերես (հա) | միավոր          | մակերես (հա) | միավոր                | մակերես (հա) | միավոր                    | մակերես (հա) |
| Արագածոտն      | 14                                                    | 2.49         | 0               | 0.00         | 4                     | 0.14         | 1                         | 0.01         | 159                                      | 213.89       | 0               | 0.00         | 56                    | 5.74         | 2                         | 0.04         |
| Արարատ         | 7                                                     | 13.46        | 3               | 0.27         | 3                     | 0.06         | 3                         | 0.01         | 156                                      | 83.78        | 3               | 0.39         | 64                    | 5.13         | 6                         | 0.18         |
| Արմավիր        | 36                                                    | 63.47        | 3               | 0.61         | 5                     | 0.64         | 5                         | 0.14         | 219                                      | 399.39       | 2               | 0.73         | 111                   | 10.97        | 11                        | 0.90         |
| Գեղարքունիք    | 2                                                     | 6.94         | 1               | 0.29         | 13                    | 1.36         | 4                         | 0.18         | 18                                       | 55.66        | 1               | 0.33         | 18                    | 2.07         | 0                         | 0.00         |
| Լոռի           | 3                                                     | 6.19         | 5               | 0.70         | 2                     | 0.06         | 3                         | 0.84         | 55                                       | 35.84        | 0               | 0.00         | 26                    | 3.17         | 6                         | 0.14         |
| Կոտայք         | 28                                                    | 29.47        | 0               | 0.00         | 51                    | 2.68         | 4                         | 0.02         | 311                                      | 150.45       | 0               | 0.00         | 220                   | 19.92        | 11                        | 3.08         |
| Շիրակ          | 1                                                     | 0.15         | 0               | 0.00         | 20                    | 0.59         | 16                        | 0.80         | 45                                       | 49.08        | 2               | 0.10         | 21                    | 1.96         | 8                         | 0.45         |
| Սյունիք        | 19                                                    | 3.65         | 0               | 0.00         | 12                    | 1.09         | 8                         | 1.62         | 23                                       | 23.20        | 0               | 0.00         | 13                    | 1.30         | 3                         | 0.24         |
| Վայոց ձոր      | 21                                                    | 19.07        | 1               | 0.06         | 4                     | 0.20         | 4                         | 0.31         | 42                                       | 25.47        | 0               | 0.00         | 8                     | 0.99         | 2                         | 0.08         |
| Տավուշ         | 24                                                    | 12.44        | 2               | 0.03         | 14                    | 0.84         | 9                         | 0.16         | 63                                       | 22.69        | 1               | 0.01         | 17                    | 2.36         | 2                         | 0.66         |
| Ընդամենը       | 155                                                   | 157.33       | 15              | 1.96         | 128                   | 7.66         | 57                        | 4.09         | 1091                                     | 1059.45      | 9               | 1.56         | 554                   | 53.61        | 51                        | 5.77         |

Աղյուսակ 3.7-5-ում ներկայացված է 2022 թվականի դեկտեմբերին պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողերի աճուրդային և ուղղակի վաճառքի գործարքների քանակների և մակերեսների բաշխվածությունն ըստ մարզերի և ըստ հողերի նպատակային նշանակության՝ բացառությամբ առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների հողերի.

Աղյուսակ 3.7-5

| Վարչական շրջան | Հողերի ուղղակի վաճառք |              |                       |              |                           |              |          |              | Հողերի աճուրդ վաճառք |              |                 |              |                       |              |                           |              |          |              |
|----------------|-----------------------|--------------|-----------------------|--------------|---------------------------|--------------|----------|--------------|----------------------|--------------|-----------------|--------------|-----------------------|--------------|---------------------------|--------------|----------|--------------|
|                | արդյունաբերական       |              | բնակավայրերի հողեր    |              |                           |              | ընդամենը |              | գյուղ. նշանակության  |              | արդյունաբերական |              | բնակավայրերի հողեր    |              |                           |              | ընդամենը |              |
|                |                       |              | բնակելի կառուցապատման |              | հասարակական կառուցապատման |              |          |              |                      |              |                 |              | բնակելի կառուցապատման |              | հասարակական կառուցապատման |              |          |              |
|                | միավոր                | մակերես (հա) | միավոր                | մակերես (հա) | միավոր                    | մակերես (հա) | միավոր   | մակերես (հա) | միավոր               | մակերես (հա) | միավոր          | մակերես (հա) | միավոր                | մակերես (հա) | միավոր                    | մակերես (հա) | միավոր   | մակերես (հա) |
| Արագածոտն      | 0                     | 0.00         | 1                     | 0.002        | 0                         | 0.00         | 1        | 0.002        | 5                    | 1.61         | 0               | 0.00         | 3                     | 0.14         | 1                         | 0.01         | 9        | 1.76         |
| Արարատ         | 0                     | 0.00         | 1                     | 0.003        | 2                         | 0.005        | 3        | 0.008        | 7                    | 13.46        | 3               | 0.27         | 2                     | 0.06         | 1                         | 0.006        | 13       | 13.796       |
| Արմավիր        | 0                     | 0.00         | 3                     | 0.55         | 1                         | 0.01         | 4        | 0.56         | 36                   | 63.47        | 3               | 0.61         | 2                     | 0.09         | 4                         | 0.13         | 45       | 63.30        |
| Գեղարքունիք    | 0                     | 0.00         | 0                     | 0.00         | 2                         | 0.01         | 2        | 0.01         | 2                    | 6.94         | 1               | 0.29         | 13                    | 1.36         | 2                         | 0.17         | 18       | 8.76         |
| Լոռի           | 0                     | 0.00         | 2                     | 0.06         | 1                         | 0.31         | 3        | 0.37         | 2                    | 1.75         | 5               | 0.70         | 0                     | 0.00         | 2                         | 0.53         | 9        | 2.98         |
| Կոտայք         | 0                     | 0.00         | 5                     | 0.09         | 2                         | 0.01         | 7        | 0.10         | 22                   | 28.66        | 0               | 0.00         | 46                    | 2.59         | 2                         | 0.01         | 70       | 31.26        |
| Շիրակ          | 0                     | 0.00         | 6                     | 0.11         | 1                         | 0.01         | 7        | 0.12         | 1                    | 0.15         | 0               | 0.00         | 14                    | 0.48         | 15                        | 0.78         | 30       | 1.41         |
| Սյունիք        | 0                     | 0.00         | 6                     | 0.11         | 6                         | 0.22         | 12       | 0.33         | 1                    | 0.20         | 0               | 0.00         | 6                     | 0.98         | 2                         | 1.40         | 9        | 2.58         |
| Վայոց ձոր      | 0                     | 0.00         | 1                     | 0.04         | 0                         | 0.00         | 1        | 0.04         | 21                   | 19.07        | 1               | 0.06         | 3                     | 0.16         | 4                         | 0.31         | 29       | 19.60        |
| Տավուշ         | 0                     | 0.00         | 5                     | 0.18         | 1                         | 0.01         | 6        | 0.19         | 22                   | 11.80        | 2               | 0.03         | 9                     | 0.66         | 8                         | 0.15         | 41       | 12.64        |
| Ընդամենը       | 0                     | 0.00         | 30                    | 1.145        | 16                        | 0.585        | 46       | 1.73         | 119                  | 147.11       | 15              | 1.96         | 98                    | 6.52         | 41                        | 3.496        | 273      | 158.09       |

2022 թվականի դեկտեմբերին հանրապետության մարզերում արձանագրվել է նաև գյուղատնտեսական նշանակության հողերի ուղղակի վաճառքի 36 գործարք՝ 10.22 հա ընդհանուր մակերեսով:

2022 թվականի դեկտեմբերին մարզերում գրանցվել է հողերի աճուրդային վաճառքի 278 գործարք, ընդ որում՝ աճուրդային վաճառքի գործարքների քանակը 2022 թվականի

նոյեմբերի համեմատ աճել է 10.3 %-ով, իսկ 2021 թվականի դեկտեմբերի համեմատ՝ 14.9 %-ով: Գյուղատնտեսական նշանակության հողերի աճուրդային վաճառքի գործարքների քանակը 2022 թվականի նոյեմբերի համեմատ աճել է 24.0 %-ով, իսկ 2021 թվականի դեկտեմբերի համեմատ նվազել՝ 17.9 %-ով, բնակելի կառուցապատման (տնամերձ) հողերը 2022 թվականի նոյեմբերի համեմատ աճել է 3.2 %-ով, իսկ 2021 թվականի դեկտեմբերի համեմատ՝ 96.0 %-ով, հասարակական կառուցապատման հողերը 2022 թվականի նոյեմբերի համեմատ աճել է 10.8 %-ով, իսկ 2021 թվականի դեկտեմբերի համեմատ՝ 36.7 %-ով, արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողերը 2022 թվականի նոյեմբերի համեմատ նվազել է 31.8 %-ով, իսկ 2021 թվականի դեկտեմբերի համեմատ մնացել անփոփոխ:


## 4 ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՐՔՆԵՐ

### 4.1 Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկայում իրականացված վարձակալության գործարքների վերլուծություն

4.1.1 2022 թվականի դեկտեմբերին անշարժ գույքի նկատմամբ իրականացվել է 1077 վարձակալության գործարք, որը կազմել է անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների ընդհանուր քանակի 5.3 %-ը:

2010-2022 թվականների դեկտեմբեր ամսվա անշարժ գույքի վարձակալության գործարքների քանակները ներկայացված են Գծապատկեր 4.1-1-ում.


Գծապատկեր 4.1-1




4.1.2 Հանրապետությունում 2022 թվականի դեկտեմբերին անշարժ գույքի վարձակալության գործարքների առավել բարձր տոկոսաչափ՝ 53.2 %, գրանցվել է Երևան քաղաքում, իսկ առավել ցածրը՝ 1.3 %՝ Արագածոտնի մարզում:

Գծապատկեր 4.1-2-ում և Գծապատկեր 4.1-3-ում ներկայացված է 2022 թվականի դեկտեմբերին հանրապետությունում անշարժ գույքի վարձակալության գործարքների տոկոսային և քանակական բաշխվածությունը ըստ Երևան քաղաքի և մարզերի:

Գծապատկեր 4.1-2



Գծապատկեր 4.1-3



Աղյուսակ 4.1-1-ում ներկայացված է 2022 թվականի դեկտեմբերին հանրապետությունում իրականացված վարձակալության գործարքների քանակական համեմատությունը 2021 թվականի դեկտեմբեր և 2022 թվականի նոյեմբեր ամիսների նկատմամբ:

Աղյուսակ 4.1-1

|                        | 2021<br>թվականի<br>դեկտեմբեր | փոփոխումը    | 2022<br>թվականի<br>դեկտեմբեր | փոփոխումը    | 2022<br>թվականի<br>նոյեմբեր |
|------------------------|------------------------------|--------------|------------------------------|--------------|-----------------------------|
| Երևան                  | 484                          | 18.4%        | 573                          | 17.7%        | 487                         |
| Արագածոտն              | 20                           | -30.0%       | 14                           | -73.6%       | 53                          |
| Արարատ                 | 86                           | -60.5%       | 34                           | 0.0%         | 34                          |
| Արմավիր                | 53                           | 11.3%        | 59                           | 90.3%        | 31                          |
| Գեղարքունիք            | 40                           | 2.3 անգամ    | 93                           | 2.8 անգամ    | 33                          |
